

# Դ Ա Ս Ի Պ Լ Ա Ն

## Դաս SՀS կիրառմամբ

Ուսուցիչ՝ \_\_\_\_\_

Ամսաթիվը՝ \_\_\_\_\_ թ.

Առարկան՝ մաթեմատիկա

Դասարանը՝ 5-րդ

Դասի թեման՝ Ծավալ. ուղղանկյունանիստի ծավալը

Դասի բնույթը՝ նոր նյութի հաղորդման դաս

Դասի նպատակը՝

- ✦ ամրապնդել և ընդհանրացնել ուղղանկյունանիստի վերաբերյալ ձեռք բերած գիտելիքները,
- ✦ գաղափար տալ ծավալի, ծավալի հատկությունների, չափման հիմնական միավորների մասին,
- ✦ զարգացնել ուղղանկյունանիստի ծավալի և խորանարդի ծավալի մասին նախնական գիտելիքներ,
- ✦ ձևավորել կատարած գործողություններն ու քայլերը հիմնավորելու, տեսական գիտելիքները գործնական խնդիրների լուծման ժամանակ կիրառելու հմտություններ,
- ✦ մեծացնել հետաքրքրությունն առարկայի նկատմամբ:

**Սովորողի ուսումնական ակնկալիքները**

- ✦ Իմանա՝ ինչ են ուղղանկյունանիստը և խորանարդը, որոնք են ծավալի հատկություններն ու չափման միավորները:
- ✦ Ճանաչի և գծապատկերի այդ երկրաչափական մարմինները:
- ✦ Արտահայտի ծավալի որոշ չափման միավորներ մյուսներով:
- ✦ Հաշվի ուղղանկյունանիստի ծավալը:

Դասի կահավորումը՝

➤ համակարգիչ, պրոյեկտոր և մեծ էկրան:

**Դասի ընթացքը.**

1. Բանավոր հարցում
2. Նոր նյութի հաղորդում
3. Առաջադրանքների կատարում
4. Դասի ամփոփում և գնահատում
5. Տնային աշխատանքի հանձնարարում

**Դ Ա Ս Ի Ը Ն Թ Ա Ց Ք Ի Ն Կ Ա Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը**

**1. ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ**

(2-րդ սլայդ)

Էկրանին հերթով բացվում են հարցեր, որոնց պատասխանները հնարավորություն են տալիս կրկնելու և ընդհանրացնելու արդեն ունեցած այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են ուսումնական նյութն ամրապնդելու և առաջադրանքները կատարելու համար: Աշակերտները պատասխանում են այդ հարցերին: Հարցերը հետևյալն են.

1. Ի՞նչ երկրաչափական պատկերներից է կազմված ուղղանկյունանիստը:
2. Որո՞նք են ուղղանկյունանիստի չափումները:
3. Ինչպիսի՞ ուղղանկյունանիստն է կոչվում խորանարդ:

**2. ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ**

(3-16-րդ սլայդներ)

Նոր նյութի հաղորդումն ուղեկցվում է սլայդների ցուցադրումով:

3-8-րդ սլայդներում ցուցադրվում են ուղղանկյունանիստի ձև ունեցող առարկաների պատկերներ և կառույցների լուսանկարներ:

9-11-րդ սլայդների միջոցով մեկնաբանվում է ծավալի, նրա հատկությունների, միավոր խորանարդի և ծավալի չափման հիմնական միավորների վերաբերյալ տեսական նյութը:

12-14-րդ սլայդներում լուսաբանվում է ուղղանկյունանիստի ծավալ հասկացության մասին նյութը, ցուցադրվում է ուղղանկյունանիստի ծավալի հաշվման օրինակ՝ անհմացիոն պատկերներով, տրվում է ձևակերպումը:

15-16-րդ սլայդներում ցուցադրվում է ծավալի չափման որոշ միավորներ մյուսներով արտահայտելու վերաբերյալ նյութը:

### 3. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

(17-28-րդ սլայդներ)

Էկրանին հերթով ցուցադրվում են առաջադրանքները: Յուրաքանչյուր առաջադրանքի կատարման համար աշակերտներին ժամանակ է տրվում: Առաջադրանքները հետևյալն են.

**Առաջադրանք 1.** (18-րդ սլայդ)

Լրացրե՛ք աղյուսակը:



Երկարություն՝ $a$	11 սմ	13 սմ	10 սմ	12 դմ
Լայնություն՝ $b$	3 սմ	8 սմ	2 դմ	5 դմ
Բարձրություն՝ $c$	7 սմ	10 սմ	5 սմ	
Ծավալ՝ $V$				240 դմ <sup>3</sup>

Առաջադրանքի լուծումը նույնպես ցուցադրվում է 18-րդ սլայդում:

Ժամանակի խնայողության նպատակով աշակերտներին տալ մեկական թերթիկ, որի վրա պատկերված է աղյուսակը: Աշակերտները թերթիկները փակցնում են տետրերում, իսկ հետո գրառում առաջադրանքի լուծումը:

**Առաջադրանք 2.** (19-րդ և 22-րդ սլայդներ): Առաջադրանքն ընտրովի պատասխանով է:

1 ս կող ունեցող խորանարդը կտրտել են 1 դմ կողով խորանարդիկների և դրանք կցադրել են մեկ շարքով: Ի՞նչ երկարությամբ շարք է ստացվել:

Մլայդները պարունակում են հիպերհղումներ. ընտրված պատասխանի վրա մկնիկի ձախ սեղմակի սեղմում կատարելով՝ բացվում է սլայդ, որը ցույց է տալիս՝ այդ պատասխանը ճիշտ է, թե սխալ: Ճիշտ պատասխանի ընտրության դեպքում ցուցադրվում է լուծումը:

**Առաջադրանք 3.** (23-րդ և 26-րդ սլայդներ)

Ճշմարիտ է արդյոք դատողությունը.

**«Ուղղանկյունանիստի ծավալը հավասար է նրա հիմքի մակերեսի և բարձրության արտադրյալին»:**

Այս առաջադրանքը նույնպես ընտրովի պատասխանով է, և սլայդները նույնպես պարունակում են հիպերհղումներ. ընտրված պատասխանի վրա մկնիկի ձախ սեղմակի սեղմում կատարելով՝ բացվում է սլայդ, որը ցույց է տալիս՝ այդ պատասխանը ճիշտ է, թե սխալ: Ճիշտ պատասխանի ընտրության դեպքում ցուցադրվում է լուծումը:

**Առաջադրանք 4.** (27-րդ սլայդ)


Լուծել խնդիրը:

Ուղղանկյունանիստի ձև ունեցող **48 մ<sup>3</sup>** տարողությամբ և **2 մ** խորությամբ ջրավազանի հատակը երեսապատելու համար գնեցին հախճասալիկներ **1 մ<sup>2</sup>** -ը **8000** դրամով: Որքա՞ն վճարեցին հախճասալիկների համար:

Առաջադրանքի լուծումը ցուցադրվում է նույն՝ 27-րդ սլայդում:

**Առաջադրանք 5.** (28-րդ սլայդ)

Պատկերված մարմինը բաղկացած է **2 սմ** երկարությամբ կող ունեցող խորանարդիկներից: Գտե՛ք այդ մարմնի ծավալը:



Առաջադրանքի լուծումը ցուցադրվում է նույն՝ 28-րդ սլայդում:

#### 4. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Անդրադարձ կատարել և դասն ամփոփել:

Մատյանում գնահատել 3-4 աշակերտի՝ հիմնավորելով նշանակած գնահատականը:

#### 5. ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆԱԴԱՐՈՒՄ

(29-րդ սլայդ)

Սովորել § 35. «Ծավալ. ուղղանկյունանիստի ծավալը» դասը,

կատարել № 844 ա, բ, 845, 847 առաջադրանքները:

#### Օգտագործված գրականություն

1. Նահապետյան Բ., Աբրահամյան Ա. Մաթեմատիկա 5: Մաս 1: Հիմնական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք.-Եր.: Մանմար, 2019, <https://online.fliphtml5.com/fumf/jhyn/#p=1>
2. Նիկոլսկի Ս. Ս., Պոտապով Մ. Կ., Ռեշետնիկով Ն.Ն., Շնկին Ա.Վ. Մաթեմատիկա 5: Մաս 1, հիմնական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք.- Եր.: Անտարես, 2019, <https://online.fliphtml5.com/fumf/qufi/#p=1>
3. Մաթեմատիկա: Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր.- Եր.: Անտարես, 2006:
4. Դասի ժամանակ օգտագործված ցուցադրման հղումը՝ <https://lib.armedu.am/resource/3844>